# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07

վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

**04.06.2013թ.** **ժ.09: 00**

**Մասնակցում էին՝** Ս.Մնացականյան (Խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Լ.Պետրոսյան (Խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (Խորհրդի քարտուղար):

**Հրավիրված էին՝** Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Հ. Տիտիզյան (ֆինանսների վիճակագրության բաժնի պետ), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Ա.Դաշյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետի պաշտոնակատար), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ),

**Օրակարգի նախագծում ՝ վեց հարց.**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան «ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**2.** «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2007-2011 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի վիճակագրության ամբիոնի դասախոս Ռ. Գևորգյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**3.** «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի կողմից 2007-2011թթ. «Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ պետական վիճակագրական հաշվետվություններով հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազան (ըստ «Մանրածախ առևտուր» տնտեսական գործունեության հիմնական տեսակ ունեցող կազմակերպությունների) Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ամբիոնի դասախոս Ռ.Գևորգյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Հ.Տիտիզյան/*

**4.** «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**5.** Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1.Հաղորդում՝ Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում 2013 թվականի մայիսի 13-ից 15-ը «ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպած ագրո-բնապահպանական վիճակագրության վերաբերյալ սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Յու.Պողոսյան/*

5.2. Հաղորդում՝ Ղազախստանի Ալմաթի քաղաքում 2013 թվականի մայիսի 13-ից 16-ը ՄԱԿ-ի մարդասիրական հարցերը համակարգող վարչության կողմից կազմակերպված Հումանիտար ճգնաժամի իրավիճակում տվյալների հավաքագրման և վերլուծության հարցերով տեղեկատվության կառավարման և ղեկավարման գծով տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Վ.Դավթյան/*

5.3. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2013 թվականի մայիսի 23-ից 24-ը «Ռուսաստանի վիճակագրության արդիականացման 20 տարին. փորձը և հեռանկարները» թեմայով միջազգային գիտական-գործնական կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Ս.Մնացականյան/*

**6.** Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան «ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

թույլատրել «ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2007-2011 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի վիճակագրության ամբիոնի դասախոս Ռ. Գևորգյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

թույլատրել Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի վիճակագրության ամբիոնի դասախոս Ռ. Գևորգյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2007-2011 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի կողմից 2007-2011թթ. «Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ պետական վիճակագրական հաշվետվություններով հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազան (ըստ «Մանրածախ առևտուր» տնտեսական գործունեության հիմնական տեսակ ունեցող կազմակերպությունների) Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ամբիոնի դասախոս Ռ.Գևորգյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Հ.Տիտիզյան/*

**Որոշեցին՝**

թույլատրել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ամբիոնի դասախոս Ռ.Գևորգյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2007-2011թթ. «Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ պետական վիճակագրական հաշվետվություններով հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազան (ըստ «Մանրածախ առևտուր» տնտեսական գործունեության հիմնական տեսակ ունեցող կազմակերպությունների)՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

**4.** «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ տողի «522070.5» թիվը փոխարինել «510850.3» թվով, ընդամենը տողի «717056.69» թիվը փոխարինել «705836.49» թվով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

**5.** Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1.Հաղորդում՝ Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում 2013 թվականի մայիսի 13-ից 15-ը «ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպած ագրո-բնապահպանական վիճակագրության վերաբերյալ սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յու.Պողոսյան/*

5.2. Հաղորդում՝ Ղազախստանի Ալմաթի քաղաքում 2013 թվականի մայիսի 13-ից 16-ը ՄԱԿ-ի մարդասիրական հարցերը համակարգող վարչության կողմից կազմակերպված Հումանիտար ճգնաժամի իրավիճակում տվյալների հավաքագրման և վերլուծության հարցերով տեղեկատվության կառավարման և ղեկավարման գծով տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Վ.Դավթյան/*

5.3. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2013 թվականի մայիսի 23-ից 24-ը «Ռուսաստանի վիճակագրության արդիականացման 20 տարին. փորձը և հեռանկարները» թեմայով միջազգային գիտական-գործնական կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ս.Մնացականյան/*

**Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ